


Հղում հասցեագրված բոլոր նրանց, ովքեր մեկնում են արտասահմանյան գործուղումների

Ազգային հայաստության և արժանապատվության բարձր զգացումով ներկայացրեք մեր հայրենիքը արտերկրում:

Չափազանց քիչ բան ասած կլինեն, եթե տեղեկացնեն, որ փիլիսոփայության ամբիոնի վարիչ, դոցենտ Մուսաննա Դավթյանը ամռանը մասնակցել է Մոլդովայում կայացած՝ բիոէթիկական կրթության բնագավառում համագործակցության զարգացման և բիոէթիկայի դասախոսների տարածաշրջանային ասոցիացիայի ստեղծման նպատակով հրավիրված ՅՈՒՆԵՍԿՕ-ի փորձագետների հավաք-հանդիպմանը: Ի դեպ նա ՅՈՒՆԵՍԿՕ-ի բիոէթիկայի գծով տարածաշրջանային փորձագետ է 2005 թվականից:

Առանձնապես չի զարմացնի նաև այն տեղեկատվություն, որ մայիսի 15-23-ը Մ. Դավթյանը Իսրայելում մասնակցել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի վերոնշյալ ցանցի անդամ ամբիոն-



Մ. Դավթյանը ՅՈՒՆԵՍԿՕ-ի բնագավառի ամբիոնի վարիչ, բժշկական կրթության համաշխարհային ընկերակցության նախագահ Ամնոն Բարնիի և նրա տիկնոջ հետ:

ների վարիչների կոնֆերանսին՝ հրավիրող կողմի հոգաձույթամբ: Սա նրա առաջին մասնակցությունը չէ այդ ամբիոնի կազմակերպած կոնֆերանսներին: Ավելացնենք նաև ի պատիվ համալսարանի ղեկավարության, ԵՊԲՀ փիլիսոփայության ամբիոնն ընդգրկված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի բիոէթիկայի ամբիոնի միջազգային ցանցում:

Այն հանգամանքը, որ նա ոչ միայն հանդես է եկել հետաքրքիր զեկուցմամբ, որպես համամախազահ վարել սեկցիոն միստերից մեկը, այլև դրսևորել իրեն որպես մեր հայրենիքի արժանավոր քաղաքացի, սասունցուն հատուկ անմիջականությամբ առեցուն իսկական հայրենասեր, ինձ ավելի է հուզել, որով և ցանկանում եմ վարակել ընթերցողիս, խորհուրդ տալով որպես փոքր ժողովրդի ներկայացուցիչ դրսույն գիտական մտքի փայլատակումից բացի իրենց այնպես դրսևորել, որ օտարների հիշողության մեջ ինչ-որ հետք թողնեն:

Անցած տարի Գերմանիայում կայացած նույնանուն կոնֆերանսից վերադառնալուց հետո խմբագրությունում գրուցում էինք նրա գործուղման մասին: «Պատկերացնում ե՞ս, մասնակիցներիս փոքրիկ քրոջ-դրոշակներ բաժանեցին՝ պատիին կախված քարտեզի վրա նշելու այն երկիրը, որտեղից եկել ենք: Յուրաքանչյուրն առանց դժվարության գտավ իր երկիրը, փակցրեց դրոշակը, իսկ ես երկու ծովերի միջև

փնտրում էի այն կետը, որը կարող էի Հայաստան համարել և ամրացնել քորոցս: Միրոս ցավեց մեծ աշխարհի քարտեզի վրա անգամ քորոցի ծայրը չտեղավորող մեր չքնաղ երկրի համար: Քորոցս ամրացրի և մոտեցա սրահի անկյունում դրված դաշնամուրին: Չարմացած հայացքներին ի պատասխան հարցրի՝ Շառլ Ազնավուրին ճանաչու՞մ եք: Արձագանքներից հասկացա, որ շատեր գիտեն մեր մեծանուն հայրենակցին: Ես սկսեցի նվագել... Անանուն մի ուժի մղումով ես վրեժ էի լուծում՝ անգամ չիմանալով՝ ումի՞ց»:

Հանդգլված եմ՝ այս հավաքի բոլոր մասնակիցները ջերմությամբ կհիշեն հայկական երաժշտության այդ ինքնաբերական պտղակույրը: Իսրայելում կայացած այս տարվա հավաքի հրավեր-ծրագրի մեջ հետաքրքիր մի փաստ գրավեց ուշադրությունս. մայիսի 17-ի ծրագրում ժամը 21-ի համար նշված է Piano Recital- S. Davtyan...

Կարծում եմ՝ ճիշտ ժամանակն է հողվածիս վերջակետը դնելու:

ՄԵՂԱ ԹՈՐՈՍՅԱՆ

UNESCO CHAIR IN BIOETHICS

The head of Philosophy chair, assistant professor Susanna Davtyan has participated in the UNESCO experts' gathering which aimed to create the territorial association of bioethicists and the development of collaboration in the sphere of bioethical education. The gathering took place in Moldova. By the way she is territorial expert of UNESCO bioethics since 2005.